

**Պատմություն,  
7 դասարան**

**Ա. <<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (9 միավոր)**

**ա. Նշել ճիշտ պատասխանը. (0,5 X 6 = 3 միավոր)**

**1. Ըստ սկզբնաղբյուրների՝ ինչպե՞ս է կոչվել Հայկական լեռնաշխարհի առաջին վաղ պետական կազմավորումը:**

- ա) Հայասա                      բ) Արատտա                      գ) Արմե                      դ) Էթիունի

**2. Ո՞վ էր Վանի թագավորության գլխավոր աստվածը:**

- ա) Շիվինի                      բ) Թեյշեբա                      գ) Խալդի                      դ) Տորք

**3. Նշված պնդումներից ո՞րը ճիշտ չէ:**

- 1) Կապուտան կամ Ուրմիո լիճը գտնվում է Հայկական լեռնաշխարհի և Իրանի սարահարթի միջև:
- 2) Ք.ա. III դարի վերջին կար հայկական չորս թագավորություն՝ Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծովք և Կապադովկիա:
- 3) Սարգուրի II-ը Սևանի արևմտյան ափին նվաճում է Վելիքուխի (Գեղարքունիք) երկիրը:
- 4) Տուշպա-Վանը հիմնադրել է Սարգուրի I-ը:

**4. Ո՞ր բերդաքաղաքը դարձավ Կիլիկիայի Ռուբինյան իշխանության կենտրոնը 1098 թ.:**

- ա) Հռոմկլա                      բ) Լամբրոն                      գ) Լևոնկլա                      դ) Վահկա

**5. Ե՞րբ դավադրաբար սպանվեց Սլեե իշխանը:**

- ա) 1137 թ.                      բ) 1169 թ.                      գ) 1175 թ.                      դ) 1187 թ.

**6. Քաղաքները դասավորել ըստ դրանց հիմնադրման հաջորդականության:**

- ա) Երվանդաշատ                      բ) Վան                      գ) Դվին                      դ) Արտաշատ  
1) բ, ա, դ, գ                      2) դ, գ, բ, ա                      3) դ, բ, ա, գ                      4) ա, բ, դ, գ

**բ. Լրացնել կամ գրել պատասխանները: (0,5 X 6 = 3 միավոր)**

**1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

- ա) Գառնիի տաճարի կառուցումը  
բ) Աբեմենյան պետության հիմնադրումը  
գ) Տիգրանակերտի ճակատամարտը  
դ) Խառանի ճակատամարտը  
ե) Կյուրոս Կրտսերի ապստամբությունը պարսից արքայի դեմ

1	2	3	4	5

**2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

- ա) Տրդատ Ա-ի թագադրումը Հռոմում
- բ) Մասանյան հեղաշրջումը Պարսկաստանում
- գ) Խոսրովի անտառի հիմնումը
- դ) Արտաշես Բ-ի գահակալության սկիզբը
- ե) Մծբինի պայմանագրի կնքումը

1	2	3	4	5

**3. <<...Հայերը նետահարելով հռոմեացիներին՝ շատերին սպանեցին, իսկ շատերին էլ վիրավորեցին, իսկ վերքերը ծանր էին և դժվար բուժելի, քանզի հայերը գործածում էին երկծայր նետեր>>:**

**Ո՞ր ճակատամարտի մասին է հռոմեացի պատմիչի վկայությունը, և ո՞ր զորավարի գլխավորությամբ հռոմեական զորքը պարտություն կրեց:**

**4. Պետական կազմավորումները դասավորե՛ք ըստ ստեղծման ժամանակագրական հաջորդականության:**

- ա) Վանի թագավորություն
- բ) Հայասա
- գ) Արատտա
- դ) Հայկյանների Այրարատյան թագավորություն
- ե) Թեգարամա

1	2	3	4	5

**5. Տրված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

- ա. Գագիկ 1-ինի գահակալման սկիզբը
- բ. Վահկա բերդի րավումը Ռուբինյանների կողմից
- գ. Հեթումյան արքայատոհմի հաստատումը Կիլիկյան Հայաստանում
- դ. Մոնղոլների գլխավոր արշավանքը Հայաստան
- ե. Գրիգոր Մամիկոնյանի գլխավորությամբ հակաարաբական ապստամբությունը
- զ. Դվինի ազատագրումը Ջաքարյանների կողմից
- է. Մանազկերտի ճակատամարտը

1	2	3	4	5	6	7

**6. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բացատրությանը:**

1. Արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյա, արքունական պալատի կառավարիչ:
2. Արքունի քարտուղարությունը և օտար երկրների հետ բանակցությունները գլխավորող պաշտոնյա:
3. Արքունի հեծելազորի հրամանատար:
4. Թագավորի առաջին խորհրդական, անչափահաս գահաժառանգի և ամբողջ երկրի խնամակալ:

- ա) սպարապետ (գունդստար)
- բ) սպասալար
- գ) պալ
- դ) սենեակալ
- ե) կանցլեր

1	2	3	4

**գ. Լրացնել կամ գրել պատասխանները: (3 միավոր)**

1. Տստ հոռմեացի պատմիչի վկայության՝ ի՞նչ ողբերգություն էին դիտում պարթև և հայոց թագավորները Արտաշատում, և ո՞ւր էր դերասանը, որ արտասանում էր այդ ողբերգությունից \_\_\_\_\_

\_\_\_\_\_ :

**2. Տրված բացատրություններից ո՞րն էրկուսն են ճիշտ: (1 միավոր)**

- ա) Հին Հայաստանում գյուղական համայնքի ղեկավարը կոչվում էր ստրատեգոս:
- բ) Հայոց թագավորի թիկնապահ հեծելազորն այլ կերպ կոչվում էր սպարապետական զունդ:
- գ) Հայերի ամենահին գլխավոր աստվածը եղել է Բելը:
- դ) Հռոմեացիները Արտաշատն անվանում էին Հայկական Կարթագեն:
- ե) Հին հայերեն գրերը հայտնի են նաև մեհենագիր անունով:

--	--

**3. Տրված բացատրություններից ո՞րն էրկուսն են ճիշտ: (1 միավոր)**

- ա) Հռոմեացիները Արտաշատն անվանում էին Հայկական Կարթագեն:
- բ) Հին Հայաստանում գյուղական համայնքի ղեկավարը կոչվում էր ստրատեգոս:
- գ) Գառնիի տաճարը նվիրված է եղել հայոց Միհր աստծուն:
- դ) Հայոց թագավորի թիկնապահ հեծելազորն այլ կերպ կոչվում էր սպարապետական զունդ:
- ե) Հայերի ամենահին գլխավոր աստվածը եղել է Բելը:

**Բ. <<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (6 միավոր)**

**ա. Նշել ճիշտ պատասխանը. 1- 4- րդ առաջադրանքներ: (0,5 X 4 = 2 միավոր)**

**1. Փարավոն Էխնաթոնը ու՞մ հռչակեց Եգիպտոսի զերագույն աստված:**

- ա) Ամոն
- բ) Օսիրիս
- գ) Պտահ
- դ) Աթոն

**2. Ո՞րն էր Էլամ պետության մայրաքաղաքը:**

- ա) Պերսեպոլիս
- բ) Շոշ
- գ) Նինվե
- դ) Էքբատան

**3. Ո՞ր պետությունը ստեղծեցին խաչակիրները Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո:**

- ա) Ֆրանկական պետություն
- գ) Սրբազան հռոմեական կայսրություն
- բ) Նիկեական կայսրություն
- դ) Լատինական կայսրություն

**4. Ո՞ր պետության հիմնադիրն էր Օտտոն Առաջինը:**

- ա) Ֆրանկական պետություն
- գ) Սրբազան Հռոմեական կայսրություն
- բ) Նիկեական կայսրություն
- դ) Լատինական կայսրություն

**բ. ( 1 X 2 = 2 միավոր)**

**1. Կատարել համապատասխանեցում:**

- 1) Ֆիլիպ II Օգոստոս
- 2) Ռիչարդ I Առյուծասիրտ
- 3) Ֆրիդրիխ I Բարբարոս
- 4) Կարլոս Խիզախ
- 5) Գոտֆրիդ Բուլյոնացի
- ա) Անտիոքի դուքս
- բ) Երուսաղեմի թագավոր
- գ) Ֆրանսիայի թագավոր
- դ) Անգլիայի թագավոր
- ե) Գերմանական կայսր
- զ) Բուրգունդիայի դուքս

**2. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Բաբելոնի և Մարաստանի հարձակումը Ասորեստանի վրա և նրա մայրաքաղաք Նինվեի նվաճումը:
- բ) Կամբյուսեսի կողմից Եգիպտոսի նվաճումը:
- գ) Քսերքսեսի՝ Հունաստանը նվաճելու փորձը և պարտությունը:
- դ) Մուրսիլիս 1-ի կողմից Բաբելոնի նվաճումը:
- ե) Փոքր Ասիայի և Բաբելոնի նվաճումը Կյուրոս Մեծի կողմից:

**1. Գտնել չորս ճիշտ փաստարկները: գ. (1 X 2 = 2 միավոր)**

- ա) Առաջին արշավանքի արդյունքում խաչակիրներն Արևելքում ստեղծեցին չորս պետություններ:
- բ) Մունինները ընդունում են իմամի մասին գաղափարը:
- գ) Ավատատիրական քաղաքի առաջացման առաջին պայմանը արհեստի անջատումն էր գյուղատնտեսությունից:
- դ) Կարոլինգներին անվանում էին «ծույլ թագավորներ»:
- ե) Քրիստոնեության ընդունման շնորհիվ Հին Ռուսիան մաս կազմեց եվրոպական քաղաքակրթությանը:
- զ) Միջնադարյան քաղաքների տնտեսական հիմքը արհեստներն էին:
- է) Հնդկական թվային համակարգի մեջ «0» նշանը ներմուծել են հայերը: \_\_\_\_\_

**2. Գտնել չորս ճիշտ փաստարկները:**

- ա) Կլերմոն քաղաքում 1195 թ. հրավիրված եկեղեցական ժողովում Ուրբանոս II պապը հավատացյալներին կոչ արեց մեկնել Արևելք:
- բ) 843 թ. Վերդենի դաշնագիրը հիմք դրեց արդի Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի կազմավորմանը:
- գ) Նշանավոր «Մահաբհարաթա» և «Ռամայանա» վիպերգերը գրվել են սանսկրիտ լեզվով:
- դ) 1389 թ. Կոսովոյի ճակատամարտում թուրքերը ծանր պարտություն կրեցին և նահանջեցին դեպի Ադրիանապոլիս:
- ե) Իվան IV Ահեղը 1547 թ. թագադրվեց և ընդունեց ցար (կայսր) տիտղոսը:
- զ) Ռեֆորմացիան սկսվեց 1572 թ. օգոստոսի 24-ին Գերմանիայի Վիտենբերգ քաղաքում Մարտին Լյութերի 95 դրույթներով:
- է) 1618 թ. սկսվեց Երեսնամյա պատերազմը, որն առաջին համաեվրոպական պատերազմն էր:

**II. ՊԱՏԱՄԽԱՆԻ ԱԶՍՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (5 միավոր)**

**1. Հայերի ծագման վերաբերյալ պատմագիտության մեջ ի՞նչ տեսություններ կան. ներկայացրե՛ք դրանք: (2,5 միավոր)**

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

**2. Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Արտաշես Ա-ն, վերհանե՛ք դրանց նշանակությունը: (2,5 միավոր)**

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

**Գ. <<Եկեղեցու պատմություն>>**

**1. Լրացնել բաց թողնվածը: (յուրաքանչյուրը 0.5 միավոր)**

Ա. Ինչպե՞ս է կոչվում Հայոց եկեղեցին (և ինչու՞): \_\_\_\_\_

Բ. Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն է ընդունվել \_\_\_\_\_ թ., \_\_\_\_\_ թագավորի օրոք: Հայոց առաջին կաթողիկոսն է \_\_\_\_\_:

Գ. Հայերեն առաջին թարգմանված գիրքն է \_\_\_\_\_, որն իր հիանալի թարգմանության շնորհիվ կոչվում է \_\_\_\_\_: Առաջին հայերեն նախադասությունն է՝ <<Ճանաչել զիմաստությունն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ>>: Ո՞րն է այս նախադասության աղբյուրը (հստակ նշել որտեղի՞ց է այս նախադասությունը): \_\_\_\_\_:

**19. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: (0.5 միավոր)**

Ա. Մայր Տաճարի կառուցումը

Բ. Քրիստոնեության ընդունումը Աբգար 5-րդի կողմից

Գ. Լիկեայի առաջին Տիեզերական ժողովը

Դ. Գրերի գյուտը

1. դ, գ, ա, բ                      2. բ, ա, գ, դ                      3. ա, դ, գ, բ                      4. գ, ա, բ, դ

**20. Շարադրել՝ Աշտիշատի ժողովը /ե՞րբ է տեղի ունեցել, ո՞վ էր կաթողիկոսը, ի՞նչ կանոններ են ընդունվել: (3 միավոր)**

---

---

---

---

---

---

---

---

---

---

**Մաղթում ենք հաջողություն**

Անուն, ազգանուն, հայրանուն \_\_\_\_\_

Դպրոց \_\_\_\_\_

Դասարան \_\_\_\_\_